վում գաւառական վարչութեան բարձրաստիճան պաշտօնեաների դէմ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

—

Երէկ, մայիսի 17-ին, առաջնորդարանում նշանակված էր Մեսրոպ եպիսկոպոսի երկրորդ հրաւէր-ժողովը այն անձանց, որոնք մասնակցել էին ապրիլի 22-ի ժողովին յօբելեանական յանձնաժողովի ընտրութեան առիթով։ Հրաւէրի մէջ ասված էր, որ ժողովը հրաւիրվում է կատարելու լրացուցիչ ընտրութիւն՝ ի տեղի հրաժարված 5 անձանց։ Հրաւէրները ուղարկված էին նաև Թիֆլիսի յօբելեանական մասնաժողովին, «Մշակի», «Արօրի», «Տարազի» խմբագրութիւնների, վանականութիւնը և դէմս աւագի և այլոց։

Այս գործի և տեղի ունեցած միջադէպի մանրամասնութիւնները յայտնի են հասարակութեանը։ Յայտնի է և այն, որ Վեհ. կաթողիկոսը դեռ չը հաստատելով զոյութիւն ունեցող յանձնաժողովներից ոչ մինը, ինչպէս և ապրիլի 22-ին ընտրվածը, հրամայեցրել է Մեսրոպ եպիսկոպոսին ժողով գումարել միայն երկու յօրել. մարմինները, սակայն, չը գիտնք ինչ, ու, հարկ է համարվել նորից նախկին ձևով վարվել։

Արդ, Թիֆլիսի յօբելեանական մասնաժողովը (բաղկացած 40 հոգուց, Հ. Առաքելեանի նախագահութեամբ), ամսիս 16-ին նիստի գումարվելով, կայացրեց մի որոշումն, որ յայտնեց անմիջապէս առաջնորդին։

Ահա այդ գրութիւնը.

«Ձերդ՝ Սրբազնութիւն,

«Հանդէպ ձեր շրջաբերական հրաւէրին՝ զալ առաջնորդարանում կայանալիք վաղվայ ժողովին, գրերի գիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը տօնելու նպատակով ապրիլի 22-ի ժողովով ընտրված յանձնաժողովի անդամների թիւը լրացնելու համար, ի տեղի հրաժարվածների, նոյն նպատակով վաղ արդէն ընտրված մասնաժողովը, համաձայն իր այսօրվայ նիստում կայացրած որոշման, գալիս է ներկայիս հեռեւալը պատասխանելու.

«1) Մասնաժողովը իր նախորդ երկու գրութիւններով առ ձեր սրբազնութիւնը պարզ ու որոշ գրել էր իր պայմանները, որոնցով պատրաստ էր նոյնպէս վաղ արդէն ընտրված մի յանձնաժողովի հետ միացեալ նոր յանձնաժողով կազմել՝ երկուստեք հաւասար թիւով ընտրվածների, և գործել ձեր նախագահութեան ներքոյ և ըստ սահմանի համաձայն Վեհ. կաթողիկոսի կօնդակի պարտականութեանս։ Ապրիլի 22-ի ժողովը մասնաժողովի պայմանները լրիւ չընդունեց, թողեալ դեռ այն հանգամանքը, որ մինչ նա ներկայացնում էր յանձնաժողովը իր ընտրողներով հանդերձ, մասնաժողովը ինքը միայն էր ձեր սրբազնութիւնից հրաւէր ստացած առանց իր ընտրողների։ Այդ հանգամանքը խախտեց երկուստեք հաւասար թիւով ընտրվածներ ունենալու պայմանը։ Ուստի 22-ի ժողովով ընտրված 15 հոգուց 5-ը, որոնք մասնաժողովի կազմին էին պատկանում, հրաժարվեցին։ Արդ, 15 թիւը լրացնելու համար դուք նոր ժողով էք հրաւիրում՝ զրաձեալ նախորդի հանգամանքով։

«2) Մասնաժողովս այդ հանգամանքը խախտումն է համարում արդարութեան և հաւասարութեան զալ կարող չէ. նա, մնալով հաստատ իր յիշատակեալ գրութիւններին, դիմում է սրբազնութեանդ բարեհաճ հոգացողութեանն և յայտնում է հետեւեալը. երբ մասնաժողովը ձեր կողմից կը ստանայ տեղեկութիւն, թէ յանձնաժողովը ընտրել է իր ներկայացուցիչներին նոր խառն յանձնաժողով կազմելու համար, ըստ մտաց Վեհ. կաթողիկոսի հրամանդի, ինքն ևս անյապաղ իր ներկայացուցիչները կընտրէ հաւասար թիւով՝ միւսների հետ ձեր նախագահութեան ներքոյ գործելու։»

—

Նոյնպէս «Մշակի», «Արօրի» և «Տարազի» խմբագրութիւնները յայտնել են, որ հնարաւոր չեն գտնում մասնակցել այս նոր ժողովին, քանի որ իրանց նախկին պայմանները չեն ընդունված։

—

Մեզ հաղորդում են, որ նաև վանականների աւագը հնարաւոր չէ գտել մասնակցել ժողովին։